

խնդրոյ աւագ թագաւորին՝ պսակեալ էր սակաւութ յառաջ), եւ դասք դասք ազնուաց երկրին եւ բազմութիւն զօրականաց՝ վայելչապէս զգեստաւորեալք. գորոց՝ արբանեակք նոցին կրելով՝ ՚ի ձեռս զնշանս եւ զորօշս, եւ ածելով զերիվարս նոցին պալարակապս, երթային յառաջնոյ մեծի թագաւորին. իսկ ընդ մէջ սորա եւ նոցա՝ ընթանային գունդ գունդ զինակրաց փայեկաց՝ անձնապահք թագաւորին. եւ ամենայն բազմութիւն ժողովոյն մեծաձայն աղաղակաւ ողջունէր զնա՝ կոչելով, *Սուրբ Թագաւոր*, (*Sub Tacvol*), մինչդեռ մեծաւ շքով իջանէր նա ՚ի խորան իւր հարեալ առ ափն գետոյն: Ջկնի սոցա գային ՚ի հետիոտս՝ Յոյնք զգեստաւորեալք, պատրիարքաւ իւրեանց, եւ բազում սրբազան սպասութ. եւ այնքան մեծ լինէր ձայն հնչման փողոցն եւ այլոց երաժշտական գործեաց, զի հանդէս իմն քան թէ թափօր թուէին յարդարել. գտեղի առին եւ սոքա ՚ի սահմանեալ իւրեանց կայանս՝ առ գետեզերքն: Յետ այնորիկ իջանէր վայելչապէս դաս ուխտի եկեղեցոյն Հայոց՝ զխաչն մկրտութեան բարձեալ, հանդերձ արքեպիսկոպոսան, հեզադէմ կերպարանօք եւ բարութ կարգաւ⁹⁷:... Սոքա եւս կալան գտեղի կայից իւրեանց առ յիշեցեալ գետովն: Եւ ՚ի գումարել ամենայն խմբից հանդիսին ՚ի մի վայր, եւ դաս առ դաս եղանակել, տեսանէաք յուժգնակի հնչել նոցին՝ զալիս երկայն մօրուացն իբրեւ օդալիցս իմն ծփելաս ՚ի վերայ կրծոցն, եւ ընթեռնելով աւետարանս եւ թուղթս առաքելականս ՚ի յոյն եւ ՚ի հայ լեզու, եւ զկերպարանեալն Յորդանան օրհնելով, զխաչն՝ գոր բերեալ էին՝ մկրտէին ՚ի ջուր, եւ յաջմէ կողմանէ արձակէին աղանի մի: Յայնժամ հեծեալ ոմն ՚ի յաւանակ՝ յառաջեալ իջեալ ՚ի մէջ գետոյն, կանգուն կալով՝ վերագոչէր շաքարաձայն բարբառով. **Կեցցէ թագաւոր մեր յաւիտեան.** եւ դարձեալ, *Զօրութիւն եւ հաստատութիւն ամենայն քրիստոնէից.* եւ ՚ի միաձայն պատասխանի առնել բազմութեանն՝ աղաղակելով, *Ասէն*, յառաջադէմն այն քաջ եւ յահեակ զալիս ջուրցն հերձանէր. ընդ որ ոչ սակաւք քրքիջ բարձին:– Ապա թագաւորն եւ այլք՝ ցողէին զինքեանս ջրովն. իսկ Ասորիք մերկացեալք ընկենուին զանձինս ՚ի ջուր:– Եւ ՚ի կատարել այսոցիկ ըստ օրինի, դասք եկեղեցականացն դառնային ՚ի վանս իւրեանց. իսկ թագաւորն եւ զօրականք՝ ՚ի դաշտ անդր դիմէին, եւ պալարակապ երիվարօքն արշաւակի վագս

⁹⁷ Ջորս յոյժ գովել կամէի, ասէ, եթէ չէր շփոթեալ զկարգն՝ մեծամօրուս երիցու միոյ, որոյ յանցանելն ընդ վտակ մի օժանդակ գետոյն, գերծեալ էր կօշիկ ոտիցն, եւ ՚ի ջանալն ըմբռնել՝ կասեցոյց զթափօրն, եւ այլն: